Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1007-28.10.2010-ՄԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (2003 թվականի հոկտեմբերի 21-ի, ՀՕ-23-Ն, այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը «իրավունքների և ազատությունների պաշտպանությունը» բառերից հետո լրացնել «՝ղեկավարվելով օրինականության, հասարակական համակեցության և սոցիալական արդարության հիմնարար սկզբունքներով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պաշտպանը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ և 8-րդ կետերով.

«7) դիմել Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդ առկա իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ խորհրդատվական բնույթի պաշտոնական պարզաբանումներ ստանալու նպատակով.

8) հանդես գալ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հաղորդմամբ: Հաղորդումն ստացած վարույթ հարուցելու իրավասություն ունեցող անձը պարտավոր է հաղորդման քննարկման արդյունքների մասին տեղեկացնել Պաշտպանին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում:»:

Հոդված 4. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պաշտպանի պաշտոնային դրույքաչափը հավասար է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնային դրույքաչափին: Պաշտպանի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարը հաշվարկվում է Սահմանադրական դատարանի նախագահի համար օրենսդրությամբ նախատեսված կարգով:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Պաշտպանի պաշտոնն առնվազն մեկ սահմանադրական ժամկետ զբաղեցրած՝ 65 տարին լրացած անձին տրվում է կենսաթոշակ՝ Սահմանադրական դատարանի նախագահի կենսաթոշակի համար օրենսդրությամբ նախատեսված կարգով: Պաշտպանի պաշտոնային դրույքաչափի կամ հավելավճարի ավելացման դեպքում կենսաթոշակը համամասնորեն վերահաշվարկվում է:»:

Հոդված 5. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը (այսուհետև՝ նաև՝ Պաշտպանի աշխատակազմ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որում իրականացվում է պետական ծառայություն՝ «Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայությունը» (այսուհետև՝ նաև՝ Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայություն) անվանմամբ:

2. «Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայությունը» Սահմանադրությամբ և սույն օրենքով Պաշտպանին վերապահված լիազորությունների իրականացումն ապահովելու նպատակով իրականացվող մասնագիտական գործունեությունն է, որն իրականացվում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում:

3. Մարզերում կարող են ստեղծվել Պաշտպանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներ:

4. Հիմնարկի հիմնադրին և կառավարման մարմնին վերապահված լիազորություններն իրականացվում են Պաշտպանի կողմից:»:

Հոդված 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 23.1-րդ հոդվածով.

«Հոդված 23.1. Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայությունը կարգավորող իրավական ակտերը

1. Պաշտպանի աշխատակազմում մասնագիտական գործունեությունը, բացառությամբ տեխնիկական սպասարկման գործառույթների հետ կապված աշխատանքային գործունեության, պետական ծառայություն է, իսկ աշխատակազմում համապատասխան հաստիքներ զբաղեցնող աշխատողները պետական ծառայողներ են:

2. Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության հետ կապված հարաբերությունների վրա տարածվում են «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության նկատմամբ և չեն հակասում սույն օրենքին:

3. «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները Պաշտ պանի աշխատակազմում պետական ծառայության հետ կապված հարաբերությունների նկատմամբ տարածելիս՝

1) «դատական ծառայություն»՝ ենթադրում է «Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայություն».

2) դատական դեպարտամենտի ղեկավարին վերապահված լիազորություններն իրականացնում է Պաշտպանի աշխատակազմի ղեկավարը.

3) դատարանների նախագահների խորհրդին և Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված լիազորություններն իրականացնում է Պաշտպանը.

4) այն լիազորությունները, որոնք իրականացվում են Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից՝ դատարանների նախագահների խորհրդի եզրակացության հիման վրա, իրականացնում է Պաշտպանը միանձնյա:»:

Հոդված 7. Օրենքի 24-րդ հոդվածը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 մասով.

«2.1. Պաշտպանի աշխատավարձը հաշվարկվում է սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2 մասով.

«2.2. Պաշտպանի աշխատակազմի աշխատավարձի ամսական ֆոնդը որոշվում է դատական ծառայողների աշխատանքի վարձատրության բազային դրույքաչափի 3.6-ապատիկի և Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայողների ու տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց թվաքանակի արտադրյալով: Դատական ծառայողների աշխատանքի վարձատրության բազային դրույքաչափի ավելացման դեպքում բազային դրույքաչափի ավելացված մասի նկատմամբ 3.6 գործակցի փոխարեն կիրառվում է 1.2 գործակիցը:»:

Հոդված 8. Օրենքի 25-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

3. Պաշտպանի աշխատակազմի կանոնադրությունը, Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքացուցակը ենթակա են հաստատման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

4. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկրորդ ամսվա ամսի 1-ից Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններ զբաղեցնող աշխատողները համարվում են Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայողներ:

5. Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններ զբաղեցնող ժամկետային աշխատանքային պայմանագրերով աշխատողների հետ կնքված պայմանագրերը համարվում են լուծված սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկրորդ ամսվա ամսի 1-ից, եթե այդ պայմանագրերով դրանց լուծման ավելի վաղ ժամկետներ նախատեսված չեն:

6. Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայողների առաջին վերապատրաստումն անցկացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցերորդ ամսվա ամսի 1-ից:

7. Վերապատրաստում անցած Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայողների գործունեության առաջին գնահատումն անցկացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթերորդ ամսվա ամսի 1-ից:

8. Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության դասային աստիճանները ենթակա են շնորհման Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայողների առաջին վերապատ - րաստման և գործունեության գնահատման արդյունքում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ իններորդ ամսվա ամսի 1-ը:

9. Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և փորձի հետևյալ չափանիշները.

ա) Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության բարձրագույն պաշտոններ՝ պետական կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ.

բ) Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության գլխավոր պաշտոններ՝ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

գ) Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության առաջատար պաշտոններ՝ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

10. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից Պաշտպանին, պաշտոնում չորս տարվա ստաժից ելնելով, վճարվում է հավելավճար՝ Պաշտպանի պաշտոնային դրույքաչափի 8 տոկոսի չափով: 2011 թվականի հունվարի 1-ից Պաշտպանին, տվյալ պաշտոնում ստաժից ելնելով, հավելավճարը հաշվարկվում և վճարվում է սույն օրենքով սահմանված կարգով:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ

ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
1. ՀՀ կառավարություն	1. Պատգամավորների կողմից բանավոր կարգով ներկայացված առաջարկությունների քննարկման արդյունքներով՝ առաջարկվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածում «կապակցությամբ կայացված որոշման» բառերը փոխարինել «քննարկման արդյունքների» բառերով: Նկատի է ունեցվում այն, որ քննարկման արդյունքներով միշտ չէ, որ որոշում է կայացվում:	Ընդունվել է	Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփխություններ:
	2. Պատգամավորների կողմից բանավոր կարգով ներկայացված առաջարկությունների քննարկման արդյունքներով՝ առաջարկվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասով կատարվող լրացման 2-րդ պարբերությունը հանել՝ նկատի ունենալով որ դեռևս համալիր կարգավորում չեն ստացել «համարժեք պաշտոն» հասկացության իրավական բնույթի հարցերը: Այդ առումով նշված խնդիրներին առաջարկվում է անդրադառնալ հետագայում:	Ընդունվել է	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը հանվել է:

2. ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Ա. Մարտիրոսյան 26.11.2010 թ. թիվ ԺԽ-Ե-0745/10 գրություն	1. Հոդված 4-ի 4-րդ կետում «առնվազն մեկ» բառերից հետո «սահմանադրական» բառի փոխարեն գրել «օրենսդրությամբ նախատեսված» բառերը:	Չի ընդունվել	Մարդու իրավունքների պաշտ - պանի կողմից պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանված է ոչ թե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.1-րդ հոդվածով, որի համաձայն՝ Ազգային ժողովը մարդու իրավունքների պաշտպանին ընտրում է վեց տարի ժամկետով:
	2. Հոդված 5-ի 3-րդ կետում «մարզերից» բառից հետո ավելացնել «և պաշտպանի ներկայացմամբ առանձին պետական մարմիններում (գերատեսչություններում)» բառերը:	Առաջարկությունը սկզբունքորեն ընդունելի է	Գտնում ենք, որ առանձին պետական մարմիններում մարդու իրավունքների պաշտպանի ստորաբաժանումների ստեղծմանը կարելի է անդրադառնալ միայն այդ ոլորտում առկա միջազգային փորձի ուսումնասիրությունից և համապատասխան կարգավորման մեխանիզմներ մշակելուց հետո: Այդ առումով խնդրի կարգավորմանն առաջարկում ենք անդրադառնալ հետագայում առանձին նախագծով: